

փոքր դարձուածք մը: 1170 ին Թէոտորիք Երիքովէ մօտ երեկոյ մը տեսաւ վաթսուէն հազար անձեր՝ մեծաւ մասամբ վառուած լապտեր ձեռքերնին: Արարներու տիրապետութեան ժամանակ ալ, 1217 ին Աստուածայայտնութեան տօնին՝ շատ հեռու տեղերէ աղաքները կը բերէին մկրտելու Յորդանանի մէջ:

Յորդանանի Ս. Յովհաննու Մկրտչի վանքին ձիշգ դիմացը Բեթարբան է՝ ուր կը բնակէր Յովհաննէս եւ ուր մեր Տէրը մկրտուեցաւ. «Այս ի Բեթարբա եղեւ յայնկոյս Յորդանանու, ուր էր Յովհաննէս և մկրտատէր» (Յովհ. Ա. 28): Բեթարբան՝ որ «անցք» կը նշանակէ, այն ծանծաղուան էր՝ ուրկէ կարելի էր հետիոտան երթալ. այդ տեղը կը կոչուէր *Կլ-Կորանիե*, որուն վրայ ի հնումն շինուած էր քարէ կամուրջ մը՝ ինչպէս յայտնի է մօտի գետեղերեայ աւերակէն, եւ այժմ ալ կը գտնուի փայտէ կամուրջ մը. նոյն տեղէն է որ կ'երթային մէկ եղերքէն միւսը: Քրիստոսի մկրտութեան տեղւոյն քրիստոնէական հին աւանդութիւնը ցոյց կուտայ Բեթարբան, ինչպէս նաև Յորդանանը: Յորդանանի անդի ի կողմն էր ուր քրիստոնէայ ուխտաւորները կը յաճախէին: Հոգևոր և վանական կեանքը հոն առաւելապէս զարգացած էր շատ հին դարերէ սկսեալ: Պորտոյի անանուն ուղեգիրը 333 ին իր Ուղեգրութեան մէջ մեր Տիրոջ մկրտութեան տեղը ցոյց կուտայ արևելեան եղերքին վրայ եւ կը յարէ թէ նոյն տեղը Մեռեալ ծովէն հինգ մղոն վեր է, և մօտ այն բլուրին՝ ուր Եղիա մարգարէ երկինք վերացաւ: Նոյն եղերքին վրայ շինուած էին Սափոսայի և Քովորասայի վանքերը, որոնց վանականները կը պահպանէին Քրիստոսի մկրտութեան եկեղեցին: Տիրող աւանդութեան մը համաձայն, Քրիստոսի մը-